նոյն տիտղոսով կը գտնենք Codex Coislinianus 263ի հետաքրքրական ստորագրութեան մէջ, զոր հրատարակեցին Omont[22], Lampros[23] եւ Kougeas[24] եւ Զլատարսքի[25] լուսաբանեց։ Այդ ստորագրութիւնը մեզի կը ցուցնէ թէ Ահարոն 1059ին Միջագէտքի դուքս էր ... δουκῶντος Ἀδριανοῦ Ἀντιοχείας, Ἀαρὼν προέδρου καὶ αὐταδέλφου τῆς Αὐγούστης Μεσοποταμίας ... Յայտնի է, որ Μεσοποταμίας անունը δουκῶντος ին կը վերաբերի։

Այդպէս չէ սակայն Զլատարսքիի կարծիքը։ «Արիստակէս Լաստիվերտացւոյ վկայութեան համաձայն, կ'ըսէ, Կոստանդին Թ. Մոնոմախոսի իշխանութեան ժամանակ արդէն Բիւզանդական կառավարութիւնը Միջագէտքի դուքս անուանած էր Գրիգոր Մագիստրոսը, Վասակ Պահլաւունիի որդին, որ նախապէս կայսեր ձգած էր Մեծ Հայքի իւր կալուածները։ Միջագէտքի վարչութիւնը ժառանգական իրեն տրուեցաւ եւ այս առանձնաշնորհումի պայմանները մասնաւոր հրովարտակի մէջ գրուեցան։ Այս պատճառով Գրիգոր Մագիստրոսի մահէն ետք (1066) Մատթէոս Ուռհայեցւոյ համաձայն՝ Միջագէտքի իշխանութիւնը եւ դուքս տիտղոսը անոր երէց որդւոյն՝ Վահրամի անցան։ Այս պայմաններու մէջ յայտնի է թէ Ահարոն չէր կրնար Միջագէտքի դուքս ըլլալ քանի որ Գրիգոր Մագիստրոս ունէր այդ պաշտօնը։ Ուստի այս ստորագրութեան մէջ δουκῶντος բառը չենք կրնար ամենեւին Ահարոնին համար առնել։ Բայց այն առեն Ահարոն Միջագէտքի մէջ ի՞նչ կը ներկայացնէր։ Անշուշտ կարեւոր պաշտօն մը պէտք էր կատարել, այլապէս այս ստորագրութեան մէջ անոր անուան պիտի չհանդիպէինք։ Նկատի ունենալով որ Ահարոն առենապետի աստիճանին բարձրացաւ՝ առանց տարակոյսի Իսահակ Ա.ի օրով, վասն զի 1047ին արդէն մագիստրոս էր, եւ թէ անոր Փոքր Ասիոյ մէջ Թուրքերու դէմ մղուած կռիւներու առթիւ ցուցուցած քաջութիւնն ու զինուորական յատկութիւնները զայն ակրութեան աչքին՝ կարող զօրավար մ'ըլլին, կը միտինք կարծելու թէ Իսահակ անոր աւելի բարձր աստիճան մը տուաւ եւ Պոլսէն հեռացնելու համար՝ կայսրութեան ամէնէն հեռաւոր նահանգը զրկեց Միջագէտքի բանակները վարելու, թերեւս այն պատճառով որ Գրիգոր Մագիստրոս ի վիճակի չէր այդ սահմանի վրայ Թուրքերու շարունակեալ յարձակումներու դէմ յաջողութեամբ կռուելու[26]»։

Մեծ բուլղար պատմագիրը, որ առ հասարակ այնպէս սրամիտ է, այս անգամ Skabalanovičի պատճառով կը սխալի, վասն զի Սոֆիայի մէջ չէ կրցած անտարակոյս քննել հայ աղբիւրներէ քաղուած տեղիքները։ Գրիգոր Մագիստրոս մեռած է ոչ թէ 1066ին, այլ 1058ին[27]։ Մատթէոս Ուռհայեցի չի յիշատակեր անոր մահուան տարին, դալով Ուռհայեցւոյ կարծեցեալ խօսքին որ իբր թէ Գրիգորի մահէն ետք որդին Վահրամ Միջագէտքի դուքս եղած ըլլայ՝ այդ ոչ թէ Ուռհայեցիէն է այլ անոր թարգմանիչէն[28]։ Բայց ինչպէս կը դիտէ J. Laurent, այդ պատմութիւնը «որ բոլոր հեղինակներէ կրկնուած է առանց աղբիւրները նշանակելու», անտարակոյս Զամչեանէ[29] է։ Հետեւապէս արդէլք մը չկայ ընդունելու մեր ստորագրութեան համաձայն, որ Գրիգոր Մագիստրոս 1058ին մեռնելէն ետք՝ իրեն իբր Միջագէտքի դուքս յաջորդեց Ահարոն։ Լաստիվերտացւոյն[30] տեղիքն ալ, որուն կ'ակնարկէ Զլատարսքի առանց քննելու պէտք չէ ընդունիլ, վասն զի ինչպէս դիտել կու տայ Ա. Ադուլեան, Գրիգոր Մագիստրոս տիտղոսն արդէն շատ առաջ ընդունած էր[31]։

Իւր քեռայրին հրաժարումէն ետքն ալ Ահարոն չդադրեցաւ կարեւոր դեր մը խաղալէ։ Կը գտնենք զայն իբր պատգամաւոր Վրաստան զրկուած Միքայէլ Դուկասի՝ Մարթայի կամ Մարիամի ամուսնութեան առթիւ, որ Վրաց Բագրատ Դ. արքային աղջիկն էր։ Ս. Գէորգ Աթոսի վրացերէն վարքին մէջ, որ 1066—1073 տարիներու գրուած է, կը գտնենք այս թանկագին տեղեկութիւնը, որ մի՛ժամանակ վերջին յիշատակութիւնն է այս անձին մասին։

Ահարոն որդի մ'ունէր Թէոդորոս անուն, որ երիտասարդ հասակին՝ Թուրքերու դէմ մղուած կռիւներու մէջ ինկաւ, 1055—1056, ինչպէս Արիստակէս Լաստիվերտացի կը պատմէ։ «Իսկ ի կողմանս Տարօնոյ Թէոդորոս որդի Ահարոնի, զոր Աւանն կոչէին՝ ըստ իւրեանց լեզուին զդիրն պակաս ունելով, որ նա էր իշխան դաւառին, առ որ եկեալ զունդ մի ի Թուրքաստանէ՝ հնազանդեցան նմա եւ կամեցան զմիամտութիւն ցուցանել, մտեալ ի դաւառն Խլաթայ եւ առեալ աւար բազում, ածին ի Տարօն։ Իսկ ժողովեալ զօրք ի Պարսից եւ ի Թուրքաստանէ յղեցին առ Թէոդորոսն թէ կամ տուր զապստամբդ ի մեզ կամ թէ ոչ զերկիրդ զերի տանիմք։ Որում ոչ առեալ յանձն յետ որոյ եկեալ ճակատեցան ընդ միմեանս երկիցս եւ երիցս, եւ բազում արութիւնս ցուցեալ իշխանին, յետոյ կարեւէր խոցեալ յետ սակաւ աւուրց վախճանեցաւ, որ յոյժ ապաշաւանաց արժանի էր նորա վախճանն մանուկ հասակաւ եւ զեղեցկաշուք կերպարանօք զդաւթի կաւ եւ զեղեցիկաշունչ եւ քաջութեամբ ունելով զնմանութիւն եւ քաջութեամբ առաւել քան զբազումս, որ տարաժամ բարձաւ ի միջոյ[32]»։

Անոնց կոմիտենոս[33] երկար կը խօսի դաւրութեան մը մասին, որ 1107 տարւոյն վերջերը Ալեքս կայսեր դէմ սարքուած էր Ահարոն եւ Թէոդորոս եղբայրներու կողմէ։ Անոնց Ահարոնը կ'անուանէ Ահարոնեան ընտանիքէ։ Ducance[34] արդէն կը յայտնէր այն կարծիքը թէ Ահարոնեան ընտանիքը իւր անունն ու ծագումը կ'առնէր Ահարոն բուլգար իշխանէն։ Նկատելով Բիւզանդացիներու սովորութիւնը, որոնք պապին անունով՝ կ'անուանէին որդիները, բաւական մեծ հաւանականութեամբ կրնանք ըսել թէ 1107ի դաւադրութիւնը կազմակերպողը Ահարոն առենապետին թոռն էր։

Աննա Կոմնենոսի Ահարոնեան ընտանիքի մասին տուած տեղեկութիւնը հայկական աղբիւրէ իւր լրացումը կը գտնէ։ Ոսկեբերանի Յովհաննու Մեկնութեան հայերէն թարգմանութեան մասնակցած են հայ, յոյն եւ ասորի. այն յոյնը որ Միջագէտք կ'ապրէր կը կոչուէր Թէոփիլոս եւ «իշխան Առանի քարտուղարն ու նախանօտարն էր»։ Այս, ինչպէս կը դիտէ P. Peeters, մեզի կարծել կու տայ թէ Ἀρώνιοι ընտանիքը Միջագէտքի մէջ դեռ դոյութիւն ունէր[35]։

MICHEL LASCARIS Թրգմ. Հ. Պ. ԷՍԱՊԱԼԵԱՆ

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՆԹԷՈՆՆԵՐՈՒՄ

(Շարունակութիւն։)

2. ԿՈՒԿԻԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

ԿԱՐԱ-ՄՈՒՐՃԱ
(1860—1902)

Ո՞վ ծանօթ չէ հայ երգի մոլեռանդ տարածողին, բազմաձայն, խմբական երգեցողութեան ամենառաջին դրօշակակիրին, ո՞վ չի լսել այդ արուեստագէտի անունը։

80ական թուական — ահա այն ժամանակաշրջանը, որ հրապարակ եկաւ Կարա-Մուրզան։

Նրա նշանախօսն էր — լայն խաւերու մէջ տարածել ժողովրդական երգը, բազմաձայն երգեցողութիւնը։ Դա այդ շրջանն էր, երբ հայ ժողովուրդը զգաստար անգամ չունէր բազմաձայն երգեցիկ խմբի եւ երգեցողութեան մասին։ Եւ Կարա-Մուրզան հանդիսացաւ առաջին դրօշակակիրը։ 17 տարի շարունակ նա յամառ, անդուլ, անվհանդ աշ-

---

[22] H. Omont, Facsimiles des manuscrits datés de la Bibliothèques Nationale du IXe au XIVe siècle, Paris 1890.

[23] Νέος Ἑλληνομνήμων, VII (1910), p. 130—131.

[24] Ἑλληνικά, III, 1930, 462.

[25] Զլատարսքի, Byzantinoslavica, I, 1929, p. 22—34.

[26] Զլատարսքի, Byzantinoslavica, I, 1929, p. 26. Կ'երեւայ թէ Զլատարսքի կը կարծէ որ նորապսակ կայսր Իսահակ Կոմնենոս իւր անձին դէմ քէն պահած ըլլայ՝ Միքայէլ Դ.ի բանակը իր դէմ վարած ըլլալուն համար։

[27] Հմմտ. Byzance et les Turcs seldjoukides, p. 39.

[28] Dulaurier, Bibliothèque Nat. arm.: Chronique de Matthieu d'Édesse, p. 411. Սկսպալանովիչ Dulaurierի այս ծանօթագրութիւնը առանց ուշադրութեան կարդալով կը սխալի երբ Գրիգոր Մագիստրոսի մահը (1058) կը դնէ 1066ին, որ Խաչիկ կաթուղիկոսի մահուան տարին է։

[29] Laurent, Byzance, p. 40, note 1, հմմտ. Զամչեան, Պատմ., Բ., 968։

[30] Ահա այդ տեղիքը. «Գրիգոր որդի քաջի Վասակայ, երկայ եւ նա գնաց առաջի թագաւորին, քանզի այր իմաստուն էր եւ խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ո՛չ այլ ոք։ Իրրեւ եռեւս եթէ ոչ են թագոյց զԳագիկ ի տեղի իւր, յառաջ կացեալ տայ զրանալին Բջնոյ ցթագաւորն եւ զամենայն զհայրենի ժառանգութիւնն եւ մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան եւ զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գեօղս եւ քաղաքս, գրով եւ մատանեաւ յաղագ յազգ մինչեւ յաւիտեան։ Արիստ. Լաստ., գլ. Ժ., էջ 51—52։ Այս խօսքը պէտք է մեկնած ըլլայ Զամչեան։

[31] Akulian, Einverleibung armenischer Territorien durch Byzanz im 9. Jahrhundert (Dissertation, Zürich 1912), S. 69. Գրիգոր Մագիստրոս հպատակները բիւզանդացիներուն չէր թողնէր բոլոր կալուածները։ Հմմտ. Laurent, Byzance, p. 39. զուցած. Հմմտ. Զամչեան, գլ. Ժէ., էջ 87։

[32] Արիստ. Լաստ., գլ. Ժէ., էջ 87։

[33] Ա. Կոմնենոս, հրակ. Teubner, II, p. 175—178.

[34] Անդ, 175։

[35] P. Peeters, Traductions et traducteurs dans l'hagiographie orientale, Analecta Bollandiana, XL, 1920, 273—274.

Ոսկեբերան, Յովհաննու Մեկնութիւն, էջմիածին թ. 1347 (շուրջ 1112ին գրուած) ունի «Յղէ ի Մեսապատամն գաւառ առ յունական հռետոր Թէոփեստէ կոչեցեալ, որ էր քարտուղար եւ պատգնաւոր իշխանին Առանն կոչեցելոյ»։

© National Library of Armenia

խատանքով պայքարեց այդ ասպարիզում։ Արհամարհելով ժամանակի տիրող նախապաշարումները, բազմաձայն երգեցողութեան դրօշի տակ համախմբեց հազարաւոր օրիորդներ եւ երիտասարդներ, հրահրեց նրանց մէջ խմբական երգեցողութեան սէրը։ Անցաւ նա գաւառից գաւառ, գիւղից գիւղ, մտաւ Կովկասի ամենայեռանդաց, ամենախուլ եւ մոռացուած անկիւնները եւ ամէն տեղ, ամենուրեք, բազմաթիւ համերգների միջոցով, տարածեց հայ ժողովրդական երգը, ամէն տեղ հիմք դրեց բազմաձայն երգեցողութեան։ Դեռ աւելին։ Նրա անմիջական ղեկավարութեամբ բազմաթիւ թաղնուած ղեղեցիկ ձայներ յայտնաբերուեցին եւ մշակուեցին. օր. Շահլամեան, Վարդիկեան, Կոմիտաս շուտով աչքի ընկան։ Կազմել է նա 90 խումբ եւ 247 քաղաքներում տուել 248 համերգ։ Դա ինքնին զեղարուեստական խոշոր մի նուաճում է։

Նրա մահից յետոյ ոչ ոք չկարողացաւ այնպէս միշտ բարձր պահել նրա պարզած բազմաձայն խմբի դրօշը։ Ո՛չ ոք չը կարողացաւ այսպիսի մոլեռանդութեամբ, անխորտակելի կամքով եւ զարմանալի տոկունութեամբ առաջ տանել նրա սկսած ղեղեցիկ գործը։ Երկար տարիներ թափուր մնաց նրա հարթած ճանապարհը։ Միայն աննման Կոմիտասը նոր երանգ եւ դոյն տուեց քառաձայն երգեցողութեանը։ Կոմիտասով էլ սկսում է մի նոր շրջան, խմբական երգեցողութեան եւ ժողովրդական երգի մշակման նոր վերելքի, նուաճումների ու յաղթանակների շրջանը։

*

1902 թուի Մարտի 27ին, 49 տարեկան հասակում, վախճանուեց այս արուեստագէտը։

Հանդիսում է Թիֆլիսի Կուկիայի կաթողիկէների գերեզմանատունը։ Քառակուսի երկաթահիւս վանդակապատ, չորս զոյնի ծառեր, մէջտեղը մարմարէ ղեղեցիկ մի կոթող — ահա Կարա-Մուրզայի գերեզմանի ամբողջական պատկերը։ Գեղարուեստական լաւագոյն մի ստեղծագործութիւն է դա։ Ներքեւում թթադոյն քարէ քառակուսի մի պատուանդան, որի վրայ հանդիսում է մարմարէ երկրորդ պատուանդանը, ապա բարձրանում է երկնագոյն մարմարից կերտուած ղեղեցիկ կոթողը, որի վերեւի մասը քանդակուած է ճարտարապետական ֆորմաներով եւ վերջանում է եռանկիւնաձեւ գեհիթով։ Կոթողի արեւելեան ճակատին՝ վերեւից փորագրուած է մարմարէ մի ծաղկեպսակ, որի մէջ իշխում է ոսկեզօծ մի քնար, ներքեւում ոսկեզօծ տառերով փորագրուած է.

ՀԱՅ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ
ԵՒ
ՀԱՅ ԵՐԳԸ ԱՄԵՆՈՒՐԵՔ ՀՆՉԵՑՆՈՂ
ԳՐԻՍՏԱՖՈՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ
1853—1902
ХРУСТАФОР КАРА-МУРЗА

Կոթողի վերեւի մասում հանդիսում է կանանչ տերեւներից եւ սպիտակ ծաղիկներից հիւսուած արուեստական մի պսակ։

*

Կանգնած մարմարէ կոթողի առաջ, երկար ապրում եմ անցեալի զեղարուեստական աշխարհում։ Կտաւի վրայ վրձինում են անցեալի ղեղեցիկ, աննման պատկերները։ Ահա մի պատկեր։ Մեծ եւ ընդարձակ դահլիճում ծփում է հասարակութիւնը։ Մեծ արուեստագէտը կանգնել է բեմի վրայ, բազմերանդ խմբի առաջ՝ իր յաղթանդամ կառուցուածքով։ Նրա քառակուսի սեւ մօրուքը, լայն ճակատը, ակնոցների տակից վայելող խօսուն աչքերն առանձին գրաւչութիւն են տալիս նրա արտիստական դիմագծին։ Կրակ կայ նրա աչքերում, ժողովրդական երգի կրակը։ Մեղմ բարձրանում են նրա ձեռքերը եւ ահա երկսեռ խումբը հնչում է քառաձայն կրակոտ երգը եւ վարակում, յուզում հազարաւորների սրտերը... Դա ժողովրդական զողարիկ մի պօէզիա է, որը տանում է ձեզ դէպի գիւղական աշխարհը, դէպի կանանչ արօտները, բարձր եւ սէգ սարերի լանջերը։ Հնձուորները վերադառնում են դաշտից, իսկ հեռուն հնչում է հովուի սրնգի անուշ, թախծոտ երգը։

Ահա մի այլ պատկեր։ Երգեցիկ խումբը կանգնել է գիւղական հրապարակում, բաց երկնքի տակ. գիւղացիները, դեղջկուհիները շրջապատել են եւ օղակել։ Հնչում է ժողովրդական աննման երգը տարբեր երանգներով եւ ալեկոծում գիւղացիների սրտերը, խօսում նրանց հոգիների հետ։ Շատերը լալիս են...

Այսպէս էր Կարա-Մուրզան։ Ամբողջապէս երգ եւ զգացմունք։ Այդ ճանապարհին էլ ընկաւ արտիստը՝ ժողովրդական-հովական անուշ երգը շրթերին...

3. ՎԵՐԱՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

ԲԺՇԿ. ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1827—1869)

Վաթսունական թուականների Ռուսահայ թատրոնի պատմութիւնն առանձին էջ պիտի յատկացնի իր ժամանակի այս շնորհալի դրամատուրգին, որ իր կոմէդիաներով եւ դրամաներով զարկ տուեց հայ թատերական աղքատիկ դրականութեանը։ Ո՞վ չի կարդացել նրա իր ժամանակաշրջանի Թիֆլիսի հասարակութեան տարբեր խաւերի կեանքը պատկերող պիէսները — «Վո՛յ քի իմ վեչերը», «Պէպօի տկնուրը», «Էս էլ քի մօցիքլուրքին», «Խոտորնակին խոտորնակ», «Նինոյի ընշ-ղաւորը», «Ժլատ», որոնք երկար ժամանակ՝ բեմադրուել են հայկական բեմերի վրայ եւ ծիծաղի հեղ արտասուք խլել զեղարուեստասէր հասարակութեան աչքերից...

1869 թ. հոկտ. 19ին, Թիֆլիսում, վախճանուեց այս բեղմնաւոր դրամատուրգը։ «Հայկական Աշխարհ» օրագիրը նրա թաղման հանդէսը գծում է այսպիսի գոյներով.

*

— «Բժիշկ Տէր-Գրիգորեանը վախճանեցաւ եւ թաղուեցաւ հոկտեմ. 19ին։ Հանդուցեալի բարեկամները հոգացել էին, որ թաղման փառաւոր հանդէսին ոչինչ չպակասէր, մինչեւ անգամ Բէթղէհէմ եկեղեցու (հանդուցեալը երեսփոխան էր) ուսումնարանի դեղցու (հանդուցեալը երեսփոխան էր) ուսումնարանի սեւազգեստ աշակերտուհիներ պատում էին դագաղը։ Սեւազգեստ աշակերտուհիներ պատում էին դագաղը։ Ճառեր շատ ասացին, առաջին ճառ ասաց պ. Նազարեանը, որի զամբանական ճառեր գրելու տաղանդը յայտնի է ամենքին, ով պատահել է որեւիցէ նշանաւոր մարդի–կնոջ թէ առն, երեւտասարդի թէ օրիորդի թաղմանը։ Միւս ճառասացներ սոքա էին. պ. Պոչեան, պ. Ամերիկեան, Հայր Մանդինեան եւ Ներս. ուսումնարանի աշակերտ կլասիկական գիմնազիոնի եւ մասնաւոր գիմնազիոնի (պ. Մանասիրցեվի եւ պ. Տէր-Ցակոբեանի) աշակերտներն պատուեցին թաղումն որ-պէս իւրեանց բժշկի եւ Ներս. ուսումնարանի աշա-կերտներն — որպէս իւրեանց հոգարարձուի։

Ինքն Սէր-Յիսուս թող ընդունի եւ հանգստացնէ հանդուցեալ բժիշկ Տէր-Գրիգորեանի հոգին»։

*

Հողակոյտի վրայ դրուած է զեղեցիկ մի յուշարձան։ Ներքեւում հանդիսում են քառակուսի ֆորմաներով քանդակուած կրանիտից կուսի ֆորմաներով պատուանդաններ, որոնց կերտուած երկու պատուանդաններ, որոնց վրայ բազմել է սպիտակ մարմար քարից յղկուած քառակուսի մի պատուանդան, որին կանգնուած ճարտարապետական զեղեցիկ հիւսուածքով քանդակուած մարմարէ քարի հարաւային ճակատին փորագրուած է.

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՔԱՅԷԼ ՄՈՎՍԻՍԵԱՆ
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
1827—1869

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ
(1835—1913)

Ո՞վ չի լսել բանաստեղծ-մանկավարժ եւ յայտնի թարգմանիչ Բարխուդարեանի անունը։

Դօրպատի ուսանող, Հին-Նախիջեւանում ուսուցիչ, «Մեղու»ի եւ ապա «Հիւսիսափայլ»ի դրօշակիր — ահա Բարխուդարեանի կեանքի պատմութիւնը։

45 երկար տարիներ ծառայում է նա մանկավարժական եւ դրական ասպարիզում եւ միաժամանակ անմահ Շիլլէրով, Գէօթէով եւ Լեսինգով դաստիարակում հայութեանը։ Նրա եւրոպական կլասիկների թարգմանութիւնները — Գէօթէի «Ֆաուստը», Շիլլէրի «Դոն Կարլոսը», «Վիլհելմ Տէլլ»ը, «Օրլեանի կոյսը», «Ֆիէսկօն», Շէքսպիրի «Վենետիկի վաճառականը», Լեսինգի «Նաթան իմաստունը» կատարուած են այնպիսի հարազատութեամբ, որ կարելի է դրական մի մի նուաճում համարել մեր ազգային դրականութեան մէջ։

Բարխուդարեանը կերտել է նաեւ ինքնուրոյն բանաստեղծութիւններ։ Ով չի յիշում նրա «Բարեպաշտ մարդիկը», նա մանաւանդ «Կապոյտ երկնքում աստղեր են փայլում» (ձայնագրութիւն Եկմալեանի)։

1913 թուի Օգոստոսի 13 Թիֆլիսում հանգաւ կուլտուրական այս գործիչը։ Թաղուած է Վերայի գերեզմանատունը, Արշակունի ընտանիքի դամբարանի մօտ։ Հողակոյտի վրայ ո՛չ յուշարձան կայ, ո՛չ էլ քար։

ՎԱՍԻԼ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆ

Բարխուդարեանի գերեզմանի մօտ հանդիսում են թատրոնական այս հին գործչի աճիւնները։ Հողակոյտի վրայ դրուած է երկար եւ հաստ սպիտակ մարմարէ մի քար, որի վերեւի մասում քանդակուած է մի մեծ խաչ. ներքեւում, սպիտակ հիմքի վրայ, սեւ տառերով փորագրուած է.

ՎԱՍԻԼ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆ
18 15/I 43—19 24/III 17

© National Library of Armenia

ՏԻԳՐԱՆ ՆԱՂԱՐԵԱՆ

Ո՞վ չի յիշում իր ժամանակի ամենազործօն, աննկուն հասարակական գործիչ, «Աղբիւր», «Տարազ» թերթերի խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նաղարեանին, որ բազմաթիւ անյայտ գրական գործիչներ առաջ քաշեց եւ փրկեց կորստից: Ո՞վ չի յիշում նրա հասարակական գործունէութիւնը պատերազմի տարիներում գաղթականներին օգնելու, նրանց ճաշ ու թէյ մատակարարելու, «հրատապ օգնութիւն մատուցանելու» համար:

*

Հանդէսում է ազիզ մօր չիրմին կից: Հողակոյտի վրայ ոչ քար կայ ոչ էլ արձանագրութիւն:

ԶԱՐՈՒՀԻ ՆԱՂԱՐԵԱՆ

Սպիտակ պէճաւոր մարմար քարի վրայ հանդէսում է թանկագին սեւ-փայլուն մարմար մի քար, որի վրայ մուղ-սպիտակ տառերով փորագրուած է.

ԶԱՐՈՒՀԻ ՍԱՀԱԿԵԱՆ
ԶԱՌԻ ԲԱՂԻ
ՆԱՂԱՐԵԱՆ
ԾՆ. ՇՈՒՇԻ ՅՈՒՆՒԱՐ 1835
† 1914 ՄԱՐՏ ԹԻՖԼԻՍ

Դա «Աղբիւր»-«Տարազ» հանդէսների խմբագիր՝ Տիգրան Նաղարեանի մօր չիրմին է:

ԵՐԵՄԻԱ ԳԵՒՈՐԳԵԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
(1804—1877)

Գեներալ-մայիօր: «Մշակ»ի խմբագիր՝ Գրիգոր Արծրունու հայրը, որի հասարակական գործունէութիւնը կապուած է Անդրկովկասի պատմութեան հետ:

9 տարեկան հասակում նա Վանից գալիս է Թիֆլիս: Ուսանում է նախ Թիֆլիսի գիմնազիայում, ապա Պետերբուրգի զինուորական վարժարանում: 1823 թուին մտնում է զինուորական ծառայութեան: 1826—1828 թուականներին մասնակցում է ռուս-տաճկական եւ ռուս-պարսկական պատերազմներին: Մինչեւ 1844 թուականը վարում է Կովկասեան ինտենդանտի պաշտօնը: 1866—1868 թ. նշանակւում է Թիֆլիսի քաղաքագլուխ եւ իր ակտիւ գործունէութեամբ սիրւում է հասարակութեան տարբեր խաւերից, մանաւանդ արհեստաւոր դասից:

*

1877 թ. Նոյեմբերին Թիֆլիսի բազմաթիւ, հոծ հասարակութիւնը թաղում է նրան Վերայի գերեզմանատանը:

ՋՕՐԱՎԱՐ ԱՌԱՔԵԼ ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
(1822—1892)

Հանդէսում է գեղեցիկ մի յուշարձանի ներքոյ: Դա սեւ-թխագոյն կրանիտէ մի քար է, որի երեսը ծածկուած սպիտակ մարմարէ քարի վերեւի մասում քանդակուած է մի խաչ, իսկ ներքեւում փորագրուած է.

ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅԻՕՐ
ԱՌԱՔԵԼ ԳԱՆՃՈՒՄԵԱՆ
ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
1822—1892

ՎԱՍԻԼԷ ԼՕՌՈՒ-ՄԷԼԻՔԵԱՆՑ

Գեղեցիկ քանդակներով կերտուած սեւ-նաղարդ կամարների վրայ հանդէսում է մի մեծ գմբէթ, որի տակ կողք կողքի բարձրանում են երեք չիրիմներ: Դրանցից մէկը թխագոյն հաստ կրանիտէ մի մեծ քար է, որի վրայ փորագրուած է:

ԱՍՏԻ ԱՄՓՈՓԻ ՓՈՇԻ
ՌՈՒՍՀԱՅ ԱՍՏԻՃԱՆԱՌԻ
ԿՕԼԼԷԳԻՍԿԻ ՍՕՎԷՏՆԻԿ
ՎԱՍԻԼԻ ՏԱՐԻԵԼԵԱՆ
ԼՕՌՈՒ-ՄԷԼԻՔԵԱՆՑԻ
ՎԱԽՃԱՆԵԱԼ 1868 ԱՄԻ
ՆՈՅԵՄ. 25 ՕՐՆ

ՄԻՄԷՕՆ ՆԱԲԱԽՏԵԱՆ
(1887—1933)

Հայ գրականութեան պատմութեան մէջ Նաբախտեանը համեստ մի էջ է գրաւում իր քրէական յանցաւորների կեանքից վերցրած կարճ, բայց հետաքրքիր պատկերներով:

Երկուսը տարիներ նա պաշտօնավարում է Վրաստանի եւ ամբողջ երեք տարի էլ Հայաստանի քրէական միլիցիայի ասպարէզում: Այդ է պատճառը, որ նա ա՛յնքան լաւ ծանօթ էր քրէական յանցագործների նիստ ու կացին, կենցաղին, լեզուին եւ ընկերական պայմաններին: Այդ ծանօթութեան շնորհիւ էլ նա կարողանում է վրձինել քրէական յանցաւորների կեանքից վերցրած մի շարք պատկերներ, որոնք մինչեւ այսօր էլ կարդացւում են մեծ հետաքրքրութեամբ: Այդ պատկերները տպուած են Թիֆլիսի «Մարտակոչ», «Պրոլետար», «Խաթաբալա» եւ այլ թերթերում:

*

Վախճանուեց 1933 թուի Օգոստոսի 10ին Թիֆլիսում: Հանդէսում է Վերայի գերեզմանատանը: Հողակոյտի վրայ ոչ քար կայ, ոչ էլ արձանագրութիւն:

4. Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿՈՒՄ

ԱՇՈՒՂ ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱ

Խաղով եկաւ,
Ախով գնաց Սայեաթ-Նովան.
Երգով եկաւ,
Վէրքով գնաց Սայեաթ-Նովան.
Սիրով եկաւ,
Սրով գնաց Սայեաթ-Նովան
Սիրով մնաց Սայեաթ-Նովան:
Յովհ. Թումանեան:

18րդ դարում փարոսի նման փայլում է աշուղ Սայեաթ-Նովան:

Ամբողջ երկու դար, երկու հարիւր տարի, է անցել նրա մահից, բայց դարձեալ նա չի մոռացուել. սերունդից սերունդ անցել է նրա համբաւը:

Այսօր էլ նա դեռ իշխում է հազարաւոր սրտերի վրայ:

Ո՞վ չի երգել նրա հիւսած անմահ երգերը, որոնք աշուղական գրականութեան մէջ առանձնայատուկ եւ կենտրոնական տեղ են գրաւում:

Ի՞նչումն է կայանում, ասկայն, Սայեաթ-Նովայի գերը:

Ամենառաջին աշուղն է նա, որ աշուղական գրականութիւնը դրեց գեղարուեստական բարձրութեան վրայ:

Ամենառաջին երգիչն է, որ երգեց երեք տարբեր լեզուներով — հայերէն, վրացերէն եւ Թուրքերէն: Ահա թէ ինչու նա այսօր հաւ Թուրքերէն: Ահա թէ ինչու նա այսօր հաւ մարւում է Անդրկովկասեան ժողովուրդների մարւում է Անդրկովկասեան ժողովուրդների մշակութային կապի, եղբայրական միասնականութեան խորհրդանիշը:

Դեռ ոչ մի աշուղ, ոչ մի պօէտ, իր ստեղծագործութիւններով չի կարողացել գերազանցել այդ տաղանդաւոր արուեստագէտին: Դեռ անդրկովկասեան ժողովուրդներից եւ ոչ մէկը չի տուել իր Սայեաթ-Նովան: Նա իր գեղարուեստական երգերով իշխում է մինչեւ օրս էլ որպէս տաղանդաւոր արուեստագէտ:

Սայեաթ-Նովայի տաղանդի, նրա ստեղծագործութիւնների առջեւ խոնարհուել են անգամ մեծ պօէտները — Յովհաննէս Թումանեանը մի քառեակով երգել է նրա մեծութիւնը: Եղիշէ Չարենցը նրա հետեւողութեամբ երգեր է հիւսել: Վրաց պօէտ Գրիշաշվիլին նրան նուիրել է մի ամբողջ ուսումնասիրութիւն:

Սայեաթ-Նովային սիրել են ոչ միայն պօէտները, այլ եւ նրա երգերով ոգեւորել են ժողովրդի լայն խաւերը: Այդ երգերից շատերն այսօր անգիր հնչում են հազարաւորների շրթների վրայ:

Աւելին: Նրա յիշատակը վառ պահելու համար բանաստեղծ-արուեստագէտները կերտել են գեղեցիկ կոթողներ:

Ո՞վ չի յիշում բժ. Գէորգ Ախվերդեանի 1852 թուին Մոսկուայում հրատարակած գիտական լուրջ ուսումնասիրութիւնը — «Սայեաթ-Նովայ»: Դա աշուղի երգերին նուիրուած առաջին արձանն է:

Ո՞վ ծանօթ չէ Հայ Գրողների Ընկերութեան 1914 թուին հրատարակած գրքոյկին:

Ո՞վ չի տեսել 1918 թուին լոյս տեսած նրա վրացերէն երգերը եւ վերջապէս 1931 թուին՝ Գ. Լեւոնեանի վերհրատարակութիւնը:

Այդ գեղեցիկ կոթողների հետ Թիֆլիսի Հայ Գրողների Ընկերութիւնը կանգնեցրեց մի նոր արձան: Դա Սայեաթ-Նովայի գերեզմանի յուշարձանն է:

*

Ուխտի եմ գնում տաղանդաւոր աշուղի չիրմին:

Կարօտը սրտիս, քաղցը յուշերով, մտնում եմ Թիֆլիսի Մէրգանի Ս. Գէորգ եկեղեցու բակը եւ կանգ առնում եկեղեցու պատի հարաւային կողմը, այնտեղ, ուր նահատակուեց աշուղն՝ Աղա Մահմէդ խանի զինուորների սուիններով: Այն տեղ է կանգնած ոսկեզօծ տառերով նաշխուած, ոսկերզով հիւսուած մահարձանը:

Մարմար քարից քանդակուած գեղեցիկ մի կոթող է դա, որը իր գեղարուեստական պարզ կառուցուածքով խոր տպաւորութիւն է գործում:

© National Library of Armenia

Յուշարձանի վերեւում, եռանկիւնաձեւ կամարի վրայ, իշխում է սպիտակ մարմար քարէ գեղեցկահիւս մի խաչ։ Ներքեւում մի ամբողջական սպիտակ մարմար քարից կերտուած է հայկական ոճով, կամարակապ, ծաղկահիւս եւ սիւնազարդ մի ֆասատ, որի մէջ դրոշմուած սեւ-փայլուն մարմարի վրայ կարդում եմ ոսկեզօծ տառերով փորագրուած հետեւեալ տողերը.

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ
† 1795

ԱՄԷՆ ՄԱՐԴ ՉԻ ԿԱՆԱ ԽՐՄԻ
ԻՄ ՋՈՒՐԸՆ՝ ՈՒՐԻՇ ՋՐԸԷՆ Է.
ԱՄԷՆ ՄԱՐԴ ՉԻ ԿԱՆԱ ԿԱՐԹԱ
ԻՄ ԳԻՐԸՆ՝ ՈՒՐԻՇ ԳԸՐԷՆ Է.
ԲՈՒՆԻՆԱԹՍ ԱՒԱՋ ՉԻՄԱՆԱՍ
ՓԱՐԱՓԷԼ ՓԱՐՈՒԿԸՐԷՆ Է։

Ներքեւում իշխում է երկաթեայ ծաղկահիւս գեղեցիկ մի վանդակապատ։

ՆԿԱՐԻՉ ԳԵՈՐԳ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ

Ո՞ր Կովկասահայը ծանօթ չէ Կովկասի սքանչելի բնութեան եւ գեղեցիկ տեսարանների հմուտ կուլտուրական այս նկարչին։

Բնանկարի վարպետն էր Բաշինջաղեանը, օժտուած բանաստեղծական ձիրքով։

1883 թուին բացաւ նա իր առաջին ցուցահանդէսը. իր գեղեցիկ նկարներով դրաւեց ոչ միայն ժամանակի գեղարուեստասէր հասարակութեան, այլ եւ մամուլի ուշադրութիւնը։ Ամենախիստ գեղարուեստագէտ-քննադատներն անգամ զարմացան նրա վրձինով, արձանագրեցին նրա արուեստի խորութիւնը, երանգների նրբութիւնը, շեշտեցին նրա հմուտ տէխնիկան։

«Լուսնակ գիշերը Թիֆլիսում», «Գիշերը Դարեալի ձորում», «Բօրժոմի անկիւնը», «Սեւանայ լիճը», «Մասիս», «Արարատեան դաշտը», «Վրաստանի նշանաւոր Ալազանը», «Հիւսիսային Կովկասում», «Գեօգ-Գեօլ լիճը» — ահա բանաստեղծական այն գեղեցիկ տեսարանները, որոնց նկարիչն իր վարպետ վրձինով պատկերել է կտաւների վրայ։ Այդ նկարները Կովկասեան ցուցահանդէսներում միշտ էլ պատուաւոր տեղ են գրաւել եւ իրենց վրայ կենտրոնացրել թէ՛ մամուլի եւ թէ հասարակութեան ուշադրութիւնը։

Ո՞վ կարող է ժխտել, որ նա իր հմուտ վրձինով կեանք է տուել Կովկասի սիրուն բնութեանը։

Ո՞վ չի հիացել նրա «Ալազանը» դիտելիս, ուր ցոլանում է ջրի փայլուն ծփանքը լուսնի շողերի տակ։

Ո՛ր գեղարուեստասէրը չի զմայլել նրա սէգ լեռների աննման գեղեցկութիւնը, խաղաղ ծառաստանը լուսնակ գիշերով, կամ պարզկայ գիշերը գետի ու լճի վրայ արտացոլող նկարները դիտելիս։ «Նրա գիշերը միշտ անվրդով է, լուսինը միշտ մելամաղձոտ, ջուրը միշտ անշարժ... Մինչեւ այժմ գեռ ոչ ոք տեղական նկարիչներից չի կարողացել նրա պէս նուրբը նկարել օդի թափանցկութիւնը, ոչ ոք այնպէս հիւթալի չէ արտայայտել լուսինը, նրա ճառագայթները ջրի խաղաղ մակերեւոյթի վրայ» (Շիրվանզադէ)։

*

Բաշինջաղեանի անունն արձանագրուած է ոչ միայն նկարչութեան, այլ եւ Ռուսահայ նորագոյն դրականութեան պատմութեան մէջ։

Նրա փոքրիկ պատմուածքներն այսօր էլ դեռ չեն կորցրել իրենց նշանակութիւնը։ Առանձին հետաքրքրութեամբ են կարդացուում նրա «Նկարչի կեանքից յիշողութիւններ»ը։

Նրա «Վրացի Իւանէն», «Իշխան Վաչնաձէի ագարակում», «Դարիալի ձորը», «Ալաղանի հովիտը», «Սեւանայ լիճը», «Մանուկներ եւ ծաղիկներ»ը պատմում են ձեզ նրա նկարչական հմուտ ձիրքի, երգիծական նուրբ ոճի եւ տիպարների վարպետ դծագրութեան մասին։

*

1926 թուին Թիֆլիսում վախճանուեց Բաշինջաղեանը։ Հանդիսում է Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցում, Սայեաթ-Նովայի գերեզմանի մօտ։

Պարզ, անզարդ մի շիրիմ է դա։ Ագիւսէ պատուանդանի վրայ դրուած է մուգ-թխադոյն կրանիտէ երկար եւ հաստ մի քար, որի վրայ դուք չէք դանի ո՛չ մի արձանագրութիւն եւ ո՛չ էլ մի յուշագիր։ Անգամ հանել են քարի վերին ճակատին դրուած ապակին եւ նրա ներքեւում դրուած նկարչի լուսանկարը։

Ծանր եւ թախծոտ տպաւորութիւնների ներքոյ բաժանուում եմ շիրմից...

5. ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այստեղ են հանդիսում տարբեր շրջանների եւ տարբեր հոսանքների եւ դրօշակների պատկանող հասարակական-գրական գործիչներից շատերը։ Այնտեղ դուք կանգ էք առնում խմբագիրների, հրապարակախօսների, գրականագէտների շիրիմների առաջ։ Այստեղ է պանթէօնը Թիֆլիսի քաղաքագլուխների եւ գօրավարների, որոնց հոգակոյտերը զարդարուած են մարմարէ գեղակոյտերը զարդարուած են մարմարէ գեղեցիկ կոթողներով, յուշարձաններով եւ դեղեցիկ կոթողներով։ Այդ համր քարերը, քանդակները պարզ լեզուով պատմում են ձեզ դակները պարզ լեզուով պատմում են ձեզ մէկի մէկի կեանքը, ընորոշում խրատանքն մէկի կեանքը, ընորոշում խրատանքն մէկի կեանքը։ Ահա եւ չիւրի դերն ու նշանակութիւնը։ Ահա եւ նրանց սեղմ պատկերները։

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ-ՀԱՄԱԼ
(1825—1912)

«Գերեզմանիս վրայ վունչինչ արձան հարկաւոր չէ. մէկ սիւ քար ու իմ ջանը։
Վրէն գրել տուէք էսէնց՝
Գաբրիէլ Սունդուկեանց-Համալ
Ծնուեց 1825 թ. Յունիսի 29ին
Վախճանուեց 191... թ. ...ին»։

Այսպէս գրեց տաղանդաւոր դրամատուրգն իր մահից եօթն ամիս առաջ իր յայտնի կտակում, որը տպուեց 1912 թուին «Մշակ»ում։

Կատարե՞ց հայ հասարակութիւնը նրա միակ խնդիրը։

Ժամանակի առաջադէմ, լուսաւոր մտաւորականութիւնը երագործեց նրա կամքը։

Թիֆլիսի Վանքի Մայր եկեղեցու հարաւային պատին կից, հանդիսում են երկու շիրիմներ, երկու սեւ մարմարէ փայլուն քարեր, երկաթէլար գեղեցիկ վանդակապատով շրջանակուած։ Դրանցից մէկի վրայ ոսկեզօծ տառերով փորագրուած է.

ՍՈՓԻԱ
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ
ԾՆԵՑ ՅՈՒՆՈՒԱՐԻ 7ԻՆ
1845 Թ.
ՎԱԽՃԱՆԵՑ ԱՊՐԻԼԻ 2ԻՆ
1913 Թ.

Ոսկեզօծ տառերի վրայ հանդիսում է, սեւ մարմարի վրայ փորագրուած, մի մեծ խաչ։ Դա Գաբրիէլ Սունդուկեանի կնոջ՝ Սոփիայի շիրիմն է։

Նրա մօտ հանդիսում է տաղանդաւոր դրամատուրգը։

*

Կանգնած շիրմի առաջ, դիտում եմ պատկերը։ Մի թախծոտ զգածմունք յուզում, ալեկոծում է հոգեկան աշխարհս։ Երկար եւ լայն սեւ-փայլուն մարմարի վրայ, մեծ խաչի ներքոյ, կարդում եմ ոսկեզօծ տառերով փորագրուած միայն եօթ տող.

ԳԱԲՐԻԷԼ
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ
(ՀԱՄԱԼ)
ԾՆԵՑ ՅՈՒՆԻՍԻ 29
1825 Թ.
ՎԱԽՃԱՆԵՑ ՄԱՐՏԻ 16ԻՆ
1912 Թ.

Որոնում եմ մի այլ յիշատակագիր, այլ յուզող, տանջող տողեր։ Չկայ ո՛չ մի յուշագիր, ո՛չ մի տող։ Պարզ եւ անպաճոյճ է շիրիմը։ Միայն հաստարուն մի թթենի իր կանաչ ճիւղերը կախ արած՝ մեղմ շնչշնչում է։

Նստած թթենու ներքոյ, մարմար քարի ծայրին, խորասուզուում եմ քաղցր յուշերի մէջ, ապրում անցեալի մտորումներով։ Ահա աչքերիս առաջ է պատկերանում տաղանդաւոր դրամատուրգն իր պարթեւ հասակով եւ բարի դիմագծով, որին առանձին գրաւչութիւն են տալիս գլխի ձիւնի պէս սպիտակ մազերը եւ սպիտակ փափախը։ Այդ սպիտակ ֆօնի միջից փայլում են նրա ժպտուն աչքերը։

Ահա մեծ կտաւի վրայ վրձինում է արուեստագէտը։ Նրա համարձակ եւ վարպետ վրձինի զարկերի ներքոյ երանգաւորւում են հին Թիֆլիսն իր ուրոյն կոլորիտով եւ հասարակութեան տարբեր խաւերն իրենց ընորոշակութեան տարբեր խաւերն իրենց ընորոշ կենցաղով։ Գեղարուեստական այդ աննման նկարների ներքոյ կարդում եմ. «Գիշերուայ սարը խէր է», «Խաթաբալա», «Ելի մէկ զուռ», «Քանդած օջախը», «Ամուսիններ»։

Ապա ո՞նց չը յիշել նրա «Պէպօ»ն, հին Թիֆլիսի ժողովրդի կենցաղը, սոցիալական կեանքը դրսեւորող այդ հոյակապ դրաման, որը մեր թատերական դրականութեան մէջ դրաւում է առանձնայատուկ էջ։

Ահա եւ նրա վարպետ մուրճով քանդակած տիպերը — Գարասիմ Եակուլիչ Զամբախովը, Եսային, Մասիսեանը, Արուքին Զիմզիմովը, Գիքօն, Կակուլին, Օսէփը, Վասիլ Մատվէիչն, Փարսիդը, Մարմարովը։

Ո՞վ կարող է մոռանալ նրա հերոսուհիները — անզուգական Էֆէմիան, վշտաբեկ

© National Library of Armenia

կէկէլը, դժբախտ Շուշանը, աննման Մարգրիտը, Խամփերին, Նատօն, Սալօմէն, Անանին:

Մէմի կենդանի արձաններ են դրանք, կերտուած մեծ արուեստագէտի վարպետ մուրճով:

Այսպէս էր Սունդուկեանը: Նա տաղանդաւոր նկարիչ էր, վարպետ քանդակագործ եւ նուրբ ու խորը հոգեբան:

Բայց ո՞ւր է արուեստագէտի վերջին ցանկութիւնը, ո՞ւր է Պէպօի արձանը:

— «Թէ սրտով վրէս արձան իք ուզում ու արժանի կու համարիք, էտ արձանը, իմ փոխանակ, Պէպօի համար կանգնեցրէք վուրդի որ կու սաղ դայ:

Սաղ բօով կանգնած ըլի բացը պատուանդանի վրայ իր հաղուստով, գլակը ծածկած, մէ ձեռին Արութինի բարաթը, մէկէլ ձեռով վրէն դրածն ըլի ցոյց տալի նրան, որ գլխարաց ու սերթուկով սիւէրես կանգնած է կշտին:

Տակը պատուանդանի վրայ դրած ըլի մենակ էս խօսկիրը՝

ՊԷՊՕ

«Էս քու կտրած ձեռքով չի՞ս գրի՞...»

Էն արձանն ու պատուանդանը թուլէմէն ըլի ահած ու չինած վրէն վունց մէ տիզ իմ անումը էտէրք»:

Այդ արձանը պիտի կերտեն մեր լաւագոյն արձանագործները:

Ա. ԵՐԵՄԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ)

ԱԶԱՏԵԱՆ Թ., *Զմրուխտէ պատմուճան. Ա. Ուղեւորութիւններ: Բ. Գիւղական պատկերներ: Գ. Արեւելեան հէքեաթներ: Դ. Արձակ բանաստեղծութիւններ*: Աթանպուշ, տպ. Յակոբ Աբրահամեան, 1936, 8⁰, էջ 191: Գինն՝ 15 ֆր.: [Մշակոյթ Մատենաշար Թ. 2:]

ԱՄԻՐԵԱՆՑ ՅՈՎՀ. Ա. ՔՀ., *Լեւոն վեցերորդ կամ Կիլիկեան իշխանութեան վերջին օրերը. Տրամ՝ Պատմական Հայ ազգային կեանքէ. վեց արար. եւ հինգ պատկեր*: Պուէնոս Այրէս, տպ. Արմենիա, 1937, 8⁰, էջ 64: Գինն՝ 20 ֆր.:

— — *Թիւ հինգ խելագարը: Քրքջալիր կատակերգութիւն, երեք արար եւ մէկ պատկեր*: Պուէնոս Այրէս, տպ. Արմենիա, 1938, 8⁰, էջ 35: Գինն՝ 12 ֆր.:

ԱՄԻՐԵԱՆ Հ., *Ընդհան. Պատմութիւն: Արդի դարեր եւ ժամանակակից շրջան: Պատկերազարդ եւ քարտիսաւոր*: Բ. գիրք: Գահիրէ, տպ. Յուսաբեր, 1937, 8⁰, էջ 271:

ԱՐՄԷՆ ԱՆՈՅՇ, *Սրտերու Երգը*: Պէյրութ 1938, 8⁰, էջ 76:

ԱՐՍԼԱՆԵԱՆ Գ. ԱՐՔ., *Գեղեցիկ Ասացուածք Գ. 1500 մտածումի, խորհուրդի եւ զգացումի քանդակներ*: Կ. Պոլիս 1937, տպ. Յովհ. Ագթարեան, 8⁰, էջ 158: Գինն՝ 20 ֆր.:

ԳԱՐԱՄԱՃԵԱՆ Ս., *Գրպանի Տարեցոյց*: Փարիզ, տպ. Տէր-Յակոբեան, 1939, 12⁰, էջ 128:

Գանձարան Հայկական Երգերու ձայնագրուած եւ Պատկերազարդ: Գահիրէ, տպ. Ոսկեստան, 8⁰:

Գիրք Ա., էջ 1—128: Գինն՝ 6 անգլ. շ.:
Գիրք Բ., էջ 129—248: Գինն՝ 6 անգլ. շ.:
Գիրք Գ., էջ 249—368: Գինն՝ 6 անգլ. շ.:

Գրասէրի Առաջնորդ., Տեար. Ա. 1938 դեկտեմբեր: Գահիրէ տպ. Սեւան, 1938, 8⁰, էջ 15:

ԵՒԳԻՆԷ ՇԱՀՆԱԶԱՐ, *Պաղտատի կարաւանը*: Սթանպուլ, տպ. Յովհաննէս Ագթարեան, 1937, 8⁰, էջ 327: Գինն՝ 20 ֆր.: [Մշակոյթ Մատենաշար Թ. 2:]

ԶԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐ, *Հարսը*: Պոսթըն, տպ. Հայրենիք, 1938, 8⁰, էջ 48: Գինն՝ 50 սենտ: [Մատենաշար Արմենիա Թ. 1:]

ԹԱՇՃԵԱՆ ԽԱՉԻԿ, *Կարճ Օրերէս*: Հրատ. Պոսթընի Կարնոյ Հայրենակցական Միութեան: 1937, 8⁰, էջ 93:

ԿՈԳԵԱՆ Հ. Ս., *Հայ Արժէքներ ու Արժանիքներ. Բանախօսութիւններ Ազգային տօներու առթիւ*: Վիեննա, Մխիթարեան տպ., 1938, 8⁰, էջ 108:

Հայ Հանրագիտակ. Գիրք Գ. Թիւ 3: Խմբ. Պոտուրեան Հ. Մ.: Պուքրէշ 1938, 4⁰, էջ 600: Գինն՝ 1·25 տոլ.:

ՄԵԼԻՏՈՆԵԱՆ Ն. Լ., *Մօր մը սիրտը*: Հաւաքածոյ 33 լաւագոյն պատմուածքներու: Պլովտիւ, տպ. Փարոս, 1937, 8⁰, էջ 82:

ՄԿՐՏԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ, *Բարիզ եւ Յուսահանդէս*: Եգիպտոս 1938, 8⁰, էջ 84:

ՅԱԿՈԲԵԱՆ ԺԱՆ Ս., *Գաղտնի ճամբան*: Գահիրէ, տպ. Գալֆա, 1938, 8⁰, էջ 92: Գինն՝ 15 ֆր.:

Պուրկտորֆի Երիցատան Յաղթանակը: Մատենաշար բանբերի Թ. 6. Հեղինակ A. Vollmar: Հալէպ-Սիւրիա, տպ. Արարատ, 1938, 8⁰, էջ 304: Գինն՝ 40 սենթ:

Verlag: Mechitharisten-Kongregation. — Für den Inhalt verantwortlich P. Mesrop Habozian. — Druck: Mechitharisten-Druckerei. — Alle Wien 62, Mechitharistengasse 4.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-ում СССР

© National Library of Armenia